**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 05**
**«ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՆԵՐԱԶԴՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՇԵՐՏԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ) ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»** ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2024 թ. հունվարի 23-ին 15:00–ին կայացած նիստի

ք. Երևան

**Նիստը նախագահում էր՝**

| | |
|---|---|
| Արթուր Մարտիրոսյան՝ /հեռավար/ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ) |

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Զարա Ասլանյան՝ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (հանձնաժողովի անդամ) |
| Վերոնիկա Խոսրասանյան՝ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ) |
| Ռեգինա Առաքելյան՝ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ) |
| Նարեկ Առաքելյան՝ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության մասնագետ (հանձնաժողովի անդամ) |
| Նարինե Հովհաննիսյան՝ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (հանձնաժողովի քարտուղար): |

**Օրակարգային հարցեր**

1. Նիստի օրակարգի քննարկում:
2. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության դիրքորոշման քննարկում և գնահատումների ամփոփում:

**1) Օրակարգի 1-ին հարց.**

Արթուր Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված և ներկայացրեց նիստի օրակարգը:

**Օրակարգի առաջին հարցի քննարկումից հետո Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի օրակարգը՝ 5 կողմ, 0 դեմ:**

**2) Օրակարգի 2-րդ հարց.**

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին փոխանցեց ԵՔ-ԴՄ-ԲՊ-01/24 ծածկագրով հայտարարված ***«Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում»*** դրամաշնորհային մրցույթին դիմած 3 կազմակերպությունների մրցութային հայտերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ կազմակերպությունների կողմից ներկայացված լրամշակումների հետ միասին: Այնուհետև, ևս մեկ անգամ ուսումնասիրելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24 ծածկագրով դրամաշնորհային մրցույթին հայտ ներկայացրած բոլոր կազմակերպությունների դրամաշնորհային հայտի փաթեթները՝ Հանձնաժողովը արձանագրեց, որ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության և «ՖԻԼՄ ԻՆԴԱՍՏՐԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում հստակ սահմանված չեն ծրագրերի խնդիրները, ազդեցությունը և իրատեսական շարունակելիության ծևը: «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համապատասխանում է դրամաշնորհի հրավերով սահմանված որակավորման տվյալների չափանիշներին, ծրագրերով նախանշված ակնկալվող արդյունքները համապատասխանում են ծրագրի նպատակներին և խնդիրներին, կազմակերպությունն ունի նմանատիպ ծրագրի իրականացման փորձառություն:

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին փոխանցեց նաև ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված զեկուցագիրը առավելագույն միավոր հավաքած կազմակերպության ֆինանսական նախահաշվի վերաբերյալ (ներքին փաստաթուղթ N Ն/17.3/512-2024, 12.01.2023 թ՝ պահանջված 2023 թվականի դեկտեմբերի 26-ի նիստի արձանագությամբ (կցվում է)): Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը հայտնել է, որ ներկայացված նախահաշվի 1.1, 1.2, 1.3, 1.5 ծախսային ուղղությունների տվյալները համապատասխանում են գործող նորմերին, մնացած ծախսային ուղղությունների տվյալները կուսումնասիրվեն դրամաշնորհային պայմանագրի կնքման փուլում:

Հանձնաժողովը ամփոփեց գնահատման արդյունքները համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Տեղեկություն բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ | Տեղեկություն մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու վերաբերյալ | Մասնակիցների ներկայացրած ֆինանսական նախահաշվի ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/ | Տեղեկություն հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին, ինչպես նաև հայտերի վերաբերյալ հարցումների մասին | Հայտերի գնահատման արդյունքները (միջին գնահատական) |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն | Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա չեն | Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով | 3.535.032 (ներառյալ ԱԱՀ) | Համաձայն Հանձնաժողովի պահանջի (2023թ.-ի դեկտեմբերի 20-ին կայացած նիստի արձանագրություն) | 0,7 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | սահմանված պայմաններին | | կազմակերպությունը սահմանված ժամկետում թերի է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը | |
| 2. | «ՖԻԼՄ ԻՆԴԱՍՏՐԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍՊԸ | Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա չեն | Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին | 3.999.600 (ներառյալ ԱԱՀ) | Համաձայն Հանձնաժողովի պահանջի (2023թ.-ի դեկտեմբերի 20-ին կայացած նիստի արձանագրություն) կազմակերպությունը սահմանված ժամկետում թերի է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը | 0,7 |
| 3. | «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ | Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են | Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին | 3.998.760 (ներառյալ ԱԱՀ) | Մասնակիցը իրականացրել է ծրագրի անվանման տեխնիկական վրիպակի շտկում: | 1 |

**Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո՝ համաձայն հանձնաժողովի ամփոփված գնահատման արդյունքների ձայների 5 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշեց.**

*2.1* Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24** ծածկագրով հայտարարված ***«Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներգրավված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում»*** դրամաշնորհային մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն Հավելված 1-ի:

2.2 Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24** ծածկագրով հայտարարված ***«Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներգրավված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում»*** դրամաշնորհային

մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն Հավելված 2-ի:

2.3 Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սույն նիստի արձանագրությունը, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 28.1-ին կետով նախատեսված հայտարարությունները և սույն արձանագրության 2.1 կետում նշված կազմակերպությունների ներկայացրած հայտի պատճենները ներկայացնել նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն՝ նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու նպատակով:

3. Հանձնաժողովի նախագահին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 33-րդ կետի կատարումը 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն արձանագրության 2.1 և 2.2 կետերով հանձնաժողովի ընդունած որոշումները ներկայացնել նախարարի հաստատմանը:

Արթուր Մարտիրոսյան ____________

Զարա Ասլանյան ____________

Վերոնիկա Խոռասանյան ____________

Ռեգինա Առաքելյան ____________

Նարեկ Առաքելյան ____________

Նարինե Հովհաննիսյան ____________

Հավելված 1.
**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**
**2024 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ**
**05 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ**

ՑԱՆԿ
կազմակերպությունների, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24** ծածկագրով հայտարարած «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում»մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր

| **Հ/հ** | **Կազմակերպության անվանումը** | **Միջոցառման /ծրագրի/ անվանումը** | **Կազմակերպության կողմից ակնկալվող գումարը /դրամ/*** | **Նախարարության կողմից տրամադրվող առավելագույն գումարը /դրամ, ներառյալ ԱԱՀ/** |
|---|---|---|---|---|
| 1. | «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ | «Կարողությունների զարգացում՝ ի նպաստ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման» | 3.998.760 | 4.000.000 |

***Կազմակերպության կողմից ակնկալվող գումարում ԱԱՀ-ն ներառված է**

Արթուր Մարտիրոսյան _______________

Զարա Ասլանյան _______________

Վերոնիկա Խորասանյան _______________

Ռեգինա Առաքելյան _______________

Նարեկ Առաքելյան _______________

Նարինե Հովհաննիսյան _______________

Հավելված 2.

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ 05 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ**

ՑԱՆԿ

կազմակերպությունների, որոնց հետ **ԵՔ-ԴՄ-ՈՖ-01/24** ծածկագրով հայտարարած «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներգաղթած հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Միջոցառման /ծրագրի/ անվանումը | Կազմակերպության կողմից ակնկալվող գումարը /դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն | «Երիտասարդների կարողությունների հզորացում» | 3.535.032 (ներառյալ ԱԱՀ) |
| 2. | «ՖԻԼՄ ԻՆԴԱՍՏՐԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՏ» ՍՊԸ | «Կինոդպրոց առանց սահմանների» կրթական ծրագիր | 3.999.600 (ներառյալ ԱԱՀ) |

Արթուր Մարտիրոսյան ____________________

Զարա Ասլանյան ____________________

Վերոնիկա Խոսրասանյան ____________________

Ռեգինա Առաքելյան ____________________

Նարեկ Առաքելյան ____________________

Նարինե Հովհաննիսյան ____________________